ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս 52-27-63, 56-12-51, ֆաքս 54-67-90

«24» 06 2015թ. № 17- Կ 11904
Ձեր –
Մտից թիվ –

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>>
ՀԿ իրավաբան

Գևորգ Հայրապետյանին

ք. Երևան Վ. Սարգսյան փ. 1, 3, 4 հարկ

Ի պատասխան Ձեր 22.05.2015թ. թիվ 249-ի 4 գրության հայտնվում է հետևյալը.

1. Արագաչափ սարքերը և տեսախցիկները փորձաքննության չեն ենթարկվում: ՀՀ-ում շահագործվող արագաչափ սարքերը ենթարկվել են ստուգաչափման և տրվել է համապատասխան ստուգաչափման մասին վկայական:
2. Արագաչափ սարքերը ստուգաչափվում են տարեկան մեկ անգամ պարբերականությամբ:
3. Երևան քաղաքում տեղադրված տեսախցիկների և արագաչափ սարքերի ցանկը տեղադրված է ՀՀ ոստիկանության police.am կայքէջում և պարբերաբար թարմացվում է: Տեսախցիկների և արագաչափ սարքերի սարքինությունը ստուգվում է դրանց գործարկման, բնականոն գործառույթի ապահովման փաստի շրջանակներում՝ ըստ անհրաժեշտության ծագող պարբերականությամբ:

Պետի պաշտոնակատար,
ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյան